

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆՈՏԱՐԻԱՏԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ
ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ա. Կարգավորման ենթակա ոլորտը և կարգավորման նպատակները

1. Առանձնապես վտանգավոր որոշ հանցագործությունների, այդ թվում՝ կոռուպցիոն հանցագործությունների հիմնական շարժառիթը դրանցից ստացվող ֆինանսական միջոցներն են: Նման դեպքերում հանցագործները հաճախ նաև փորձում են թաքցնել այդ ֆինանսական միջոցների իրական աղբյուրները՝ դրանք

«օրինականացնելով», իսկ ստացված միջոցներն արդեն օգտագործվում են քաղաքական ազդեցությունը ուժեղացնելու կամ նոր եկամուտներ ստանալու համար:

2. Այս հանցագործությունների, հատկապես փողերի լվացման դեմ արդյունավետ պայքարի միջոցներից է ֆինանսական ուսումնասիրությունների իրականացումը և հանցավոր ճանապարհով ստացված միջոցների սառեցումը և բռնագանձումը: Հանցավոր ծագում ունեցող ակտիվների բռնագանձման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ բացառելով տվյալ անձանց անհիմն հարստացման հնարավորությունը՝ այս գործիքը չեզոքացնում է հանցագործության կատարման հիմնական շարժառիթը:

3. Հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների բռնագանձման կիրառումը վերահաստատում է կարևորագույն սկզբունք՝ ոչ ոք չպետք է եկամուտներ ստանա հանցավոր ճանապարհով: Այս գործիքը մի կողմից ուղղված է հետազայում հանցագործությունների կանխարգելմանը, իսկ մյուս կողմից՝ հակաօրինական արարքով պատճառված վնասների փոխհատուցմանը և այլ անձանց խախտված իրավունքների վերականգնմանը:

4. Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձումը (non-conviction based asset forfeiture) կարևորագույն գործիք է կոռուպցիոն և այլ բնույթի հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտները բռնագանձելու համար: Այս իրավական մեխանիզմը թույլ է տալիս անօրինական ճանապարհով ստացված գույքի վրա արգելանք կիրառել և այն բռնագանձել առանց անձի նկատմամբ մեղադրական դատավճռի կայացման: Սա հատկապես կարևոր գործիք է, այն դեպքերի համար, երբ քրեական հետապնդումն իրականացնելն անհնար է օբյեկտիվ պատճառներով:

5. Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտն արդեն ներդրվել է բազմաթիվ երկրների կողմից, իսկ դրա օգտագործումը քաջալերվում է միջազգային կազմակերպությունների կողմից:

Բ. Առկա իրավիճակը և ակնկալվող արդյունքը

6. Զարգացող երկրներում կաշառք տալու հետ կապված կոռուպցիոն միջոցների շրջանառությունն ամեն տարի կազմում է մոտ 20-ից 40 միլիարդ ԱՄՆ դոլար:¹ Հանցավոր եկամուտների մեծ չափերը լուրջ վնասներ են հասցնում երկրների զարգացմանը: Միևնույն ժամանակ, այդպիսի փողերի շրջանառությունը կանխելու ավանդական միջոցները արդյունավետ չեն: Եվրոպոլի տվյալներով ԵՄ երկրներում առաջացած հանցավոր եկամուտների մեծ մասը (98.9%) չի բռնագանձվում և մնում է հանցագործների տնօրինության ներքո:²

7. Միևնույն ժամանակ, չնայած որ բռնագանձման ծավալները շարունակում են մնալ բավականին ցածր, այն եվրոպական երկրները, որոնք որդեգրել են առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը, մասնավորապես Միացյալ Թագավորությունը և Իտալիան, ունեն բռնագանձման ավելի լավ ցուցանիշներ:³

8. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձումը շարունակում է մնալ ակտիվների սառեցման և բռնագանձման արդյունավետ մեխանիզմ: 2010 թվականի հունվարից մինչև 2012 թվականի հունիսն ընկած ժամանակահատվածում ՏՀԶԿ կողմից ուսումնասիրված երկրներում ընդհանուր առմամբ 146.2 միլիոն ԱՄՆ դոլար բռնագանձված ակտիվներից 60 միլիոնը բռնագանձվել է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մեխանիզմների օգտագործմամբ:⁴

9. Հայաստանի Հանրապետությունում ակտիվների վերականգնման առումով գործող հիմնական կարգավորումը ՀՀ քրեական օրենսգրքի 103.1 հոդվածով նախատեսված հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ

¹ United Nations Office on Drugs and Crime (UNODC) and the World Bank, “Stolen Asset Recovery (StAR) Initiative: Challenges, Opportunities, and Action Plan” (Washington, DC: World Bank 2007), p. 10, citing Raymond Baker, *Capitalism’s Achilles Heel: Dirty Money and How to Renew the Free-Market System* (Hoboken, NJ: John Wiley & Sons, Inc., 2005).

² Europol, *Criminal asset recovery in the EU, Survey of Statistical Information 2010-2014, Key findings*, p.4. See also *Report of organised Crime Portfolio, 2015, From Illegal Markets to legitimate businesses: the portfolio of organised crime in Europe*, <http://www.ocportfolio.eu/>.

³ COMMISSION STAFF WORKING DOCUMENT IMPACT ASSESSMENT, *Accompanying the document Proposal for a regulation of the European Parliament and of the Council on the mutual recognition of freezing and confiscation orders*, Brussels, 21.12.2016, 26.

⁴ Gray, L., K. Hansen, P. Recica-Kirkbride and L. Mills (2014). *Few and Far: The Hard Facts on Stolen Asset Recovery*. Washington DC: World Bank and OECD, 43.

անուղղակի առաջացած կամ ստացված գույքի բռնագանձման մեխանիզմն է, որն ըստ էության թույլ է տալիս բռնագանձել բացառապես դատավճռով հաստատված հանցագործության կատարման համար օգտագործված կամ դրա արդյունքում ստացված գույքը: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մեխանիզմներն իրենց էությամբ ուղղված չեն հանցավոր ակտիվների շրջանառությունը կանխելուն, իսկ 103.1 հոդվածը միայն լրացնում է քրեական օրենսդրությամբ հետապնդվող հիմնական նպատակները: Այդ պատճառով քննարկվող ոլորտում առաջացել է անհրաժեշտություն որդեգրելու ավելի արդյունավետ ինստիտուտ, որի հիմնական նպատակն է վերականգնել ապօրինի ծագում ունեցող ակտիվները և որի մեխանիզմները հարմարեցված են հենց այդ նպատակին հասնելու համար:

10. Քրեական գործընթացներից անկախ՝ ներկայումս պետությանը պատճառված վնասը կարող է վերականգնվել քաղաքացիական դատավարության կարգով պետական շահերի պաշտպանության հայցի հարուցմամբ: Վնասի հատուցման հայցը հարուցվում է ընդհանուր հայցային վաղեմության կիրառմամբ, որի ընթացքն սկսվում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

11. Այդպես, դատախազությունը հնարավորություն ունի դիմել պետությանը պատճառված վնասների հատուցման պահանջով երեք տարվա ընթացքում սկսած այն պահից, երբ իմացել է իրավախախտման մասին, այդ թվում՝ եթե քրեական գործի հարուցումը մերժվել է⁵ կամ հարուցված քրեական գործը կարճվել է վաղեմության ժամկետները լրանալու պատճառով,⁶ ինչպես նաև եթե քրեական գործի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայության հիմքով:⁷

12. Վճռաբեկ դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ քրեական գործերով հետաքննության և նախաքննության մարմինների կողմից ընդունված որոշումներով, այդ ընթացքում անձանց տված բացատրություններով հաստատված հանգամանքները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

⁵ Տես օրինակ՝ թիվ ԱՐԴ/1839/02/18 քաղաքացիական գործով ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 9 օգոստոսի 2018 թվականի վճիռը.

⁶ Տես օրինակ՝ թիվ ԵԴ/1895/02/18 քաղաքացիական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 9 նոյեմբերի 2018 թվականի վճիռը.

⁷ Տես օրինակ՝ թիվ ՍԴ/0666/02/17 քաղաքացիական գործով ՀՀ Սյունիք մարզի ընդհանուր իրավասության դատարանի 3 հոկտեմբերի 2017 թվականի վճիռը.

52-րդ հոդվածի իմաստով չունեն նախապես հաստատված ապացույցի ուժ, այդուհանդերձ դրանք դիտվում են որպես ինքնուրույն գրավոր ապացույցներ, որոնք կարող են պարունակել տեղեկություններ և գործում առկա այլ ապացույցների հետ համադրության արդյունքում հնարավորություն տալ դատարանին պարզելու գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:⁸ Այսինքն՝ օրինակ ներկայացված որոշումները կամ մեղադրական եզրակացությունը դատարանը դիտում է որպես ինքնուրույն ապացույց և գնահատում է այլ ապացույցների հետ համադրության արդյունքում:

13. Միևնույն ժամանակ, պետությանը պատճառված վնասը բռնագանձելու համար պետք է ապացուցված լինի պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը:⁹ Ընդ որում, առաջին երեք հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է հայցվորը:

14. Վերոնշյալից բխում է, որ վնասի հատուցման պահանջի քննությունը ենթադրում է վնասի տարրերի առկայություն, իսկ հանցավոր ճանապարհով ակտիվների ստացումը կարող է ուղղակիորեն չհանդիսանալ պետությանը պատճառված վնաս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով (իրական վնաս կամ բաց թողնված օգուտ):

15. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ չնայած ՀՀ օրենսդրությամբ արդեն իսկ արգելված է հանցագործության կատարման արդյունքում կամ կատարման նպատակով գույքի ձեռքբերումը և օգտագործումը, այդպիսի գույքի բռնագանձման արդյունավետ օրենսդրական մեխանիզմները բացակայում են: Միևնույն ժամանակ, առանց մեղադրական դատավճռի գույքի ուսումնասիրման և բռնագանձման հնարավորությունը անհրաժեշտ է ՀՀ իրավական համակարգում՝ կանխելու համար ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների անխոչընդոտ օգտագործումը:

⁸ Թիվ ԱՐԱԴ/0093/02/09 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22 ապրիլի 2010 թվականի որոշումը.

⁹ Թիվ ՀՔԴ-3/0016/02/08 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13 փետրվարի 2009 թվականի որոշումը.

16. Այդպես, Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից 2015 թվականին հաստատվել է ՖԱԹՖ-ի հանձնարարականների ներդրման նպատակով 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը, որով արձանագրվել է, որ չնայած Հայաստանի Հանրապետությունում փողերի լվացման հարուցված գործերի քանակը աճել է (53 գործ 2010-2014 թթ. ընկած ժամանակահատվածում), դրանց մոտ կեսը (26 գործ) կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ):¹⁰ Հիմք ընդունելով նշվածը՝ գնահատող թիմը հորդորել է Հայաստանի Հանրապետության իշխանություններին վերանայել իրենց դիրքորոշումը և ներմուծել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման հնարավորությունը ՀՀ իրավական համակարգ:¹¹

17. Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն իր հրապարակմամբ նշում է, որ Հայաստանում չեն ուսումնասիրվում և առկա չեն պետական մարմիններին հասանելի տվյալներ Հայաստանից արտահանված Ակտիվների մոտավոր գումարի չափի, ինչպես նաև արտասահմանում գույք ունեցող պաշտոնյաների մասին, իսկ «[ա]րտասահմանում գույք և գումար ունեցող պաշտոնատար անձանց անունները, որպես կանոն, ի հայտ են գալիս տեղեկատվական սկանդալային արտահոսքերի արդյունքում:»:¹²

18. 2017 թվականի սեպտեմբերին Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության կողմից տրվել է կարծիք Հայաստանի Հանրապետության նոր Քրեական օրենսգրքի նախագծի վերաբերյալ, որտեղ փորձագետները, անդրադառնալով ապօրինի հարստանալու հանցակազմին, նշել են, որ անհրաժեշտ է դիտարկել այլ երկրների օրինակին հետևելով օրենսդրության ընդունման հնարավորությունը, որը թույլ կտա բռնագանձել գույքը

¹⁰ Anti-money laundering and counter-terrorist financing measures, Armenia, Fifth Round Mutual Evaluation Report, December 2015, 53.

¹¹ Ibid, 190.

¹² Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Ակտիվների վերականգնման քաղաքականությունը հետհեղափոխական Հայաստանում, 16 ապրիլի 2019թ, առցանց՝ <<https://bit.ly/2Uh7TkR>> .

քաղաքացիական գործի շրջանակներում, այն դեպքերում, երբ այդ գույքի ձեռքբերման աղբյուրները հնարավոր չի լինում ողջամտորեն բացատրել:¹³

19. Վերը նշվածը վկայում է այն մասին, որ չնայած առկա են դեպքեր, որոնք բավարար կասկածներ են հարուցում գույքի ձեռքբերման օրինականության վերաբերյալ, ՀՀ իրավական համակարգում բացակայում են օրենսդրական գործիքները, որոնք թույլ կտային ուսումնասիրել և բռնագանձել ապօրինի ծագում ունեցող գույքը՝ դրանով իսկ նվազեցնելով որոշ հանցագործությունների կատարման գրավչությունը: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում ստեղծված այս իրավիճակը ենթադրում է ապօրինի ճանապարհով ձեռքբերված ակտիվների վերականգնման առնչությամբ հստակ մեխանիզմների ներդրում:

20. Մշակված օրենքի նախագիծը նախատեսում է քաղաքացիաիրավական կանխատեսելի ընթացակարգեր, որոնք թույլ կտան ավելի արդյունավետ պայքարել ապօրինի ճանապարհով ստացված ակտիվների շրջանառության դեմ և դրանք վերականգնել հոգուտ պետության կամ ապօրինի գործունեության արդյունքում տուժած անձանց:

21. Օրենքի նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է կատարելագործել Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ճանապարհով ստացված գույքը տնտեսական շրջանառությունից հանելու օրենսդրական գործիքակազմը, ինչն ավելի արդյունավետ կդարձնի ֆինանսական հանցագործությունների կանխարգելումը: Նախագիծը նպատակ է հետապնդում որդեգրել միջազգային պայմանագրերով և միջազգային կառույցների խորհրդատվական բնույթի փաստաթղթերով առաջարկվող լավագույն չափանիշները հանցավոր ակտիվների շրջանառության դեմ պայքարի ոլորտում:

¹³ Opinion of the Directorate General Human Rights and Rule of Law of the Council of Europe on the Draft Criminal Code of the Republic of Armenia (Prepared on the basis of comments by: Jeremy McBride and John Wadham), September 2017, 35, para 184.

Գ. Ակտի հիմնավորվածությունը

1) Ակտի հիմքերը

I. ՄԱԿ փաստաթղթեր

22. Առանց մեղադրական դատավճռի ակտիվների բռնագանձման ինստիտուտի ներդրմանն անդրադառնում է Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան (Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 23.10.2006թ.):

23. Ակտիվների վերականգնումը կոնվենցիայի հիմնարար սկզբունքներից է,¹⁴ իսկ այդ հարցի վերաբերյալ կարգավորումները տեղ են գտել կոնվենցիայի 5-րդ գլխում:

24. Կոնվենցիան, ի թիվս այլնի կարգավորում է նաև միջազգային փոխօգնության հարցերը այն գույքը վերադարձնելու առնչությամբ, որը ստացվել է կոնվենցիայում ներառված հանցագործության կատարման արդյունքում կամ կապված է այդպիսի հանցագործության կատարման հետ: Այդ լույսի ներքո կոնվենցիան առաջարկում է պետություններին քննարկել այնպիսի միջոցներ ձեռնարկելու մասին հարցը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ այդպիսի գույքի բռնագրավման համար հնարավորություն ստեղծվի՝ առանց քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու, երբ հանցագործը չի կարող հետապնդվել մահվան, թաքնվելու կամ բացակայելու պատճառով կամ այլ համապատասխան դեպքերում:¹⁵

25. Կոնվենցիան, անդրադառնալով հանցագործության կատարման համար օգտագործված կամ դրա կատարման արդյունքում ստացված գույքի բռնագանձմանը, առաջարկում է մասնակից պետություններին նաև քննարկել գույքի օրինական ծագման ապացուցման բեռը հանցագործություն կատարած անձի վրա թողնելու հնարավորությունը:¹⁶

26. ՄԱԿ-ի՝ Թմրամոլության և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի և Համաշխարհային բանկի համագործակցության արդյունքում 2007 թվականին մեկնարկել է «Հափշտակված ակտիվների վերադարձը» նախաձեռնությունը, որը

¹⁴ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 2003թ. հոկտեմբերի 31, Հոդված 51.

¹⁵ Ibid, Հոդված 54 (1) (գ).

¹⁶ Հոդված 31 (8).

2009 թվականին կոնվենցիայի անդամ պետությունների համաժողովի ընթացքում, վերջիններիս կողմից ակտիվների վերականգնմանն առնչվող կոնվենցիայի հոդվածների կիրառման վերլուծության արդյունքներով, պետություններին, ի թիվս այլնի, առաջարկվել է ներդնել անհրաժեշտ օրենսդրական շրջանակ, որը թույլ կտա իրենց իրավասու մարմիններին առանց մեղադրական դատավճռի սառեցնել և բռնագանձել հանցավոր ճանապարհով ստացված գույքը:¹⁷ Այդպիսի օրենսդրության ձևավորման համար որպես արժեքավոր աղբյուր առաջարկվել է օգտագործել նույն թվականին հրատարակված՝ «Stolen Asset Recovery: A Good Practices Guide for Non Conviction Based Asset Forfeiture» ուղեցույցը (այսուհետ՝ Սթար ուղեցույց):¹⁸

27. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման բացակայությունը անդամ պետությունների կողմից 2018 թվականի դրությամբ գնահատվել է որպես կոնվենցիայի 54-րդ հոդվածի կիրառման լուրջ խոչընդոտներից մեկը:¹⁹

28. ՄԱԿ-ի՝ Թմրամոլության և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը կապում է նաև նույն կոնվենցիայի 20-րդ հոդվածի հետ (ապօրինի հարստացում)՝ նշելով, որ չնայած ինստիտուտն ուղղակիորեն չի բավարարում 20-րդ հոդվածի խնդիրները, այն հանդիսանում է ավելի արդյունավետ մեխանիզմ, որն արժանի է անդամ պետությունների ուշադրությանը:²⁰

Այն դեպքում, երբ առկա են ողջամիտ հիմքեր կասկածելու, որ անձի ամբողջ ունեցվածքը ավելին է օրինական ձևով ստացված ունեցվածքի արժեքից, քաղաքացիական դատարանը կամ այն իրավասու մարմինը, որն իրականացնում է ֆինանսական հետաքննությունը մինչև գործի՝ դատարան ներկայացվելը, կարող է հրավիրել անձին ապացուցելու, որ նրա ունեցվածքը չի ծագում հանցագործությունից: Համապատասխան քաղաքացիական

¹⁷ Articles of the United Nations Convention against Corruption on asset recovery: analysis of reported compliance and policy recommendations, Conference of the States Parties to the United Nations Convention against Corruption Third session Doha, Qatar, 9-13 November 2009, 62.

¹⁸ Ibid.

¹⁹ Review of implementation of the United Nations Convention against Corruption, Implementation of chapter V (Asset recovery) of the United Nations Convention against Corruption, Thematic report prepared by the Secretariat, 5 April 2018, 3.

²⁰ UNODC, State of implementation of the United Nations Convention against Corruption, Criminalization, law enforcement and international cooperation, 2017 (Second edition), Vienna, 53.

դատավարությունը պարունակում է ավելի ցածր ապացուցման շեմ, քան ողջամիտ կասկածից վեր շեմն է: Եթե իրավասու մարմինները հավանականությունների հավասարակշռման և ապացույցների գերակշռման հիման վրա հաստատում են, որ ակտիվները բխում են հանցավոր գործունեությունից, և համապատասխան անձը չի կարողանում ցույց տալ դրանց իրավական աղբյուրները, դատարանը կարող է որոշել բռնագանձել ակտիվները կամ հանձնարարել անձին վճարել այն համամասնությամբ, որը համապատասխանում է դրանց արժեքին:²¹

29. Չհիմնավորված ունեցվածքի և ապօրինի հարստացման խնդիրներին քրեական արդարադատության համակարգից դուրս գտնվող այս նորարարական մոտեցումը լավ արձագանքի է արժանացել հատկապես այն դեպքում, երբ ներդրված են եղել նաև պատասխանողի իրավունքների պաշտպանության ծանրակշիռ մեխանիզմներ:²²

30. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից 2018թ. հաստատվել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիային ՀՀ համապատասխանության 4-րդ փուլի գնահատման հաշվետվությունը, որով արձանագրվել է, որ ՀՀ-ում չի ներդրել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը և նշվել է, որ բռնագանձման ռեժիմում նախատեսվող բարեփոխումների իրականացումը Հայաստանի քրեական օրենսդրության վերանայման կարևոր մասերից մեկն է:²³

II. Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր

31. Եվրոպայի խորհրդի «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Վարչավայի կոնվենցիա) համաձայն՝ միջազգային համագործակցության շրջանակներում կոնվենցիան վավերացրած պետությունները պետք է հնարավորության դեպքում, իրենց երկրի օրենսդրության ներքո, առավելագույն չափով համագործակցեն այն

²¹ Ibid, 58.

²² Ibid, 58.

²³ OECD, Anti-corruption reforms in Armenia, 4th round of monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan, adopted at the ACN meeting on 4 July 2018, 124 and 131.

կողմերի հետ, որոնք պահանջում են կիրառել գույքի կորստին հանգեցնող՝ բռնագրավմանը համարժեք այնպիսի միջոցներ, որոնք քրեական պատժամիջոցներ չեն հանդիսանում:²⁴ Վարչապալի կոնվենցիան ընդունվել է 2005թ.-ին, և ՀՀ կողմից առանց վերապահումների վավերացվել՝ 2008թ.-ին:

32. ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի թիվ 2218 բանաձևը, կարևորելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտը, նշել է, որ հանցավոր գույքի բռնագանձմանը հաճախ խոչընդոտում է իրավասու մարմինների վրա դրված բարձր ապացուցողական շեմը և միջազգային համագործակցության անարդյունավետությունը:²⁵

33. ԵԽ բանաձևը հղում է կատարում Իռլանդիայի, Իտալիայի, Նիդերլանդների և Միացյալ Թագավորության ընդունած օրենսդրությանը, որը հեշտացնում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը՝ իջեցնելով ապացուցման շեմը չհիմնավորված ունեցվածքի հանցավոր ծագումը հաստատելու համար՝ փաստական բնույթի կանխավարկածների օգտագործմամբ, իսկ որոշ դեպքերում նաև de facto տեղափոխելով ապացուցման բեռը պատասխանողի վրա:²⁶

34. Բանաձևում նշվում է, որ նման մեխանիզմները հաջողությամբ անցել են անդամ պետությունների բարձրագույն դատարաններով և Մարդու իրավունքների եվրոպական դատարանով և հաստատվել են որպես համատեղելի մարդու իրավունքների հետ՝ նախապայմանով, որ օրենսդրությունը նախատեսում է բավարար երաշխիքներ:²⁷

35. Համապատասխանաբար, վեհաժողովը հրավիրել է անդամ պետություններին, ինչպես նաև այլ պետությունների որդեգրել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը, միևնույն ժամանակ ապահովելով.

- դատական որոշումների ողջամիտ ժամկետներում վերանայման իրավունքը,
- պետության գործողություններով պատճառված վնասի հատուցման հնարավորությունը,

²⁴ Հոդված 23 (5).

²⁵ Resolution 2218, Fighting organised crime by facilitating the confiscation of illegal assets, adopted by the Parliamentary Assembly on 26 April 2018 (17th Sitting), 3.

²⁶ Ibid, 4.

²⁷ Ibid, 5.

- անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը այն անձանց համար, ովքեր հնարավորություն չունեն ներգրավելու ներկայացուցիչ,
- և այլ երաշխիքներ.²⁸

36. Վեհաժողովը նաև առաջարկել է պետություններին ուժեղացնել միջազգային համագործակցությունը այս ոլորտում:²⁹

III. ՄԻԵԴ դիրքորոշումներ

37. Օրենքի նախագծով գույքի բռնագանձումը սահմանվել է որպես քաղաքացիաիրավական բնույթի գործիք, որը հետևաբար չի հանգեցնում վարույթի շրջանակներում քրեական ոլորտում գործող կանոնների և երաշխիքների կիրառմանը:

38. Չնայած ՄԻԵԴ-ը հաճախ արձանագրում է, որ ներպետական համակարգերում որպես քաղաքացիական դասակարգված միջոցները պատժիչ են կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիության տեսանկյունից,³⁰ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենքները հաջողությամբ հաղթահարել են դատարանի կողմից կիրառվող թեստը:

39. ՄԻԵԴ-ը չի համարել մեխանիզմը «մեղադրանքի առաջադրում», իսկ կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասը (անմեղության կանխավարկած) կիրառելի, այն դեպքերում, երբ բռնագանձման վարույթի նպատակը չի եղել անձի դատապարտումը կամ արդարացումը, նույնիսկ եթե դատարանը բռնագանձվող գույքի չափը որոշելու համար հիմք է ընդունել կանխավարկածը, որը անձը նախկինում եկամուտներ է ստացել հանցավոր գործունեության կատարման արդյունքում:³¹

40. Տարբեր գործով ՄԻԵԴ-ը մերժել է բողոքի ընդունումը և արձանագրել է, որ կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեական ոլորտի երաշխիքները, որոնք վկայակոչվել են դիմողի կողմից, կիրառելի չեն քաղաքացիական բռնագանձման՝ Միացյալ

²⁸ Ibid, 9.1.

²⁹ Ibid, 9.2.

³⁰ Engel and Others v. the Netherlands, judgment of 8 June 1976, Series A no. 22, pp. 34-35, §§ 82-83.

³¹ Phillips v. The United Kingdom, no. 41087/98, 5.7.2001, p. 34.

Թագավորության օրենսդրության կիրառման գործերով:³² Գործերից մեկով դատարանը նշել է, որ կիրառված մեխանիզմն իր բնույթով քաղաքացիական է, անկախ այն հանգամանքից, որ բռնազանձման վարույթը հաջորդել է առանձին հանցագործության կատարման համար անձի արդարացմանը, քանի որ բռնազանձման վարույթը անկախ է քրեականից իր ժամանակագրությամբ, ընթացակարգով և բովանդակությամբ:³³ Հիմք ընդունելով, որ այսպիսի մեխանիզմները չունեն պատժիչ բնույթ՝ դատարանը նաև ընդունելի չի համարել օրենքի հետադարձ կիրառման վերաբերյալ պահանջը և կիրառելի չի համարել կոնվենցիայի 7-րդ հոդվածը:³⁴

41. Դատարանը միաժամանակ կարևոր երաշխիք է համարել հրապարակային նիստերի անցկացմամբ գործի քննությունը, պետության կողմից հավաքված ապացույցները ժամանակին բացահայտելը, ինչպես նաև գրավոր և բանավոր ապացույցներ ներկայացնելու և ամենակարևորը՝ հավանականությունների հավասարակշռման չափանիշով գույքի հանցավոր ծագման ենթադրությունը հերքելու հնարավորությունը:³⁵ Ֆիլիպսի գործով գույքի ապօրինի ծագում ունենալու ենթադրության առնչությամբ ՄԻԵԴ-ը նաև նշել է, որ եթե կատարված գործարքների վերաբերյալ բողոքաբեր անձի պնդումները համապատասխանեին իրականությանը, նրա համար դժվար չէր լինի հերքել օրենսդրական ենթադրությունները:³⁶

42. Իտալիայում գործող կանխարգելիչ բռնազանձումը տարածվում է անձանց վրա, որոնք դատապարտված չեն, բայց կասկածվում են մաֆիայի հետ կապեր ունենալու մեջ: Չնայած օրենքը գործում է արդեն մի քանի տասնամյակ, այն երբեք չի համարվել քրեական ՄԻԵԴ կողմից և հետևաբար չի ենթադրել քրեական դատավարությանը հատուկ երաշխիքների կիրառելիություն:³⁷

43. Միևնույն ժամանակ, վերոնշյալը բնականաբար չի բացառում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնազանձման ինստիտուտի շրջանակներում

³² Տե՛ս օրինակ *Walsh v. The United Kingdom*, no. 43384/05, 21.11.2006, *Butler v. United Kingdom* (dec.), no. 41661/98, 27.6.2002.

³³ *Walsh v. The United Kingdom*, no. 43384/05, 21.11.2006, p. 1.

³⁴ *Ibid*, p. 2.

³⁵ *Phillips v. The United Kingdom*, no. 41087/98, 5.7.2001, p. 43.

³⁶ *Ibid*, p. 45.

³⁷ Michele Simonato, *Confiscation and fundamental rights across criminal and non-criminal domains*, *ERA Forum* (2017-09-01) 18: 365-379, 372.

մարդու հիմնարար իրավունքների կիրառելիությունը առհասարակ, այդ թվում՝ կոնվենցիայի 6-րդ հոդվածի քաղաքացիական բնույթի երաշխիքների (civil limb):

44. Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի լույսի ներքո սեփականության իրավունքի միջամտությունը պետք է շարունակի լինել օրենքով նախատեսված և համարժեք հետապնդվող իրավաչափ նպատակին:³⁸ Միաժամանակ, ՄԻԵԴ-ը հաստատել է, որ բռնագանձման համար քաղաքացիական ապացուցողական չափանիշի կիրառումը ինքնին չի նշանակում, որ կիրառված միջոցը համաչափ չէ:³⁹ Գոգիտիձեի գործով, որը վերաբերում էր կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձմանը, ՄԻԵԴ-ը ճանաչել է *im rem* բռնագանձման՝ միջազգային ճանաչում ունեցող չափանիշները, այդ թվում՝ ապացուցողական չափանիշի իջեցման, ինչպես նաև երրորդ անձանց պատկանող գույքի բռնագանձման հնարավորությունը:⁴⁰ Ավելին՝ դատարանը նշել է, որ Վրաստանի օրենսդրությունը ոչ միայն չի խախտում կոնվենցիայում ամրագրված հիմնարար իրավունքները, այլև հիմնված է կիրառելի միջազգային չափանիշների վրա:⁴¹

IV. Եվրոպական միության օրենսդրություն

45. 2008 թվականին Եվրոպական հանձնաժողովը անդամ պետությունների փորձի հիման վրա ԵՄ մարմիններին առաջարկել է դիտարկել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի ներառումը ԵՄ օրենսդրության շրջանակներում, ինչը նաև թույլ կտար ինտեգրել թիվ 3 ՖԱԹՖ առաջարկությունը:⁴² Ի թիվս այլ օրինակների, հանձնաժողովը հղում է կատարում այն դեպքին, երբ առկա է կասկած, որ գույքը ստացվել է լուրջ հանցագործության կատարմամբ՝ հաշվի առնելով դրա անհամապատասխանությունը անձի հայտարարագրած եկամուտներին և անձի կապը հայտնի հանցագործների հետ: Այս դեպքում գործը

³⁸ The Former King of Greece and Others v. Greece, no. 25701/94, §§ 79 and 89, ECHR 2000-XII.

³⁹ Webb v. The United Kingdom (dec.), no. 56054/00, 10.2.2004.

⁴⁰ Gogitidze and others v. Georgia, no. 36862/05, 12.5.2015, p. 105-107.

⁴¹ Ibid, p. 114.

⁴² COMMUNICATION FROM THE COMMISSION TO THE EUROPEAN PARLIAMENT AND THE COUNCIL, Proceeds of organised crime Ensuring that "crime does not pay", Brussels, 20.11.2008, 6. (ՖԱՏՖ-ի 2012 թվականի փոփոխված հանձնարարականներով առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտին է անդրադառնում 4-րդ հանձնարարականով).

կարող է հարուցվել քաղաքացիական դատարանում և քննվել գույքի հանցավոր ծագում ունենալու ենթադրության վրա:

46. Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտին հղում է կատարում նաև Եվրոպական Միության կողմից ընդունված 2014 թվականի հրահանգը՝ նախատեսելով, որ առնվազն այն դեպքերում, երբ մեղադրյալի կամ կասկածյալի հիվանդության կամ քննությունից թաքնվելու հետևանքով, քրեական ընթացակարգերի կիրառմամբ բռնագանձման իրականացումն անհնար է դառնում, անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ թույլ տալու համար հանցագործության կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի ստացված գույքի բռնագանձումը:⁴³

47. 2014 թվականի հրահանգը ընդունելու հետ միասին Եվրոպական պառլամենտը և Եվրոպայի խորհուրդը կոչ են արել Հանձնաժողովին վերլուծել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ընդհանուր կանոններ սահմանելու նպատակահարմարությունը, հնարավորությունը և հավանական առավելությունները՝ հաշվի առնելով տարածաշրջանի երկրների իրավական ավանդույթների և համակարգերի տարբերությունները:⁴⁴

48. Գույքի սառեցման և բռնագանձման որոշումների փոխադարձ ճանաչումը կարգավորող 2018 թվականի ԵՄ կանոնակարգն արդեն ներառում է այն որոշումները, որոնք կայացվել են առանց վերջնական մեղադրական դատավճռի,⁴⁵ իսկ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ընդհանուր կանոնների հրապարակումը շարունակում է մնալ ԵՄ օրակարգում:⁴⁶

⁴³ DIRECTIVE 2014/42/EU OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, Article 4.

⁴⁴ Proposal for a REGULATION OF THE EUROPEAN PARLIAMENT AND OF THE COUNCIL on the mutual recognition of freezing and confiscation orders, Brussels, 21.12.2016, 3.

⁴⁵ Regulation (EU) 2018/1805 of the European Parliament and of the Council of 14 November 2018 on the mutual recognition of freezing orders and confiscation orders, PE/38/2018/REV/1, Article 2 (3)(d).

⁴⁶ LEGISLATIVE TRAIN SCHEDULE, COMMON RULES FOR NON-CONVICTION BASED CONFISCATION, available online at: <http://www.europarl.europa.eu/legislative-train/theme-area-of-justice-and-fundamental-rights/file-common-rules-for-non-conviction-based-confiscation>.

V. Այլ մարմինների փաստաթղթեր

49. Ֆինանսական միջոցառումների հատուկ հանձնախմբի (ՖԱԹՖ) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի 40 հանձնարարականների համաձայն՝ երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցների սահմանման նպատակահարմարությունը, որոնք հնարավորություն են տալիս առանց քրեական գործով մեղադրական դատավճռի բռնագանձել հանցավոր ճանապարհով ստացված գույքը (առանց մեղադրական դատավճռի բռնագանձում): ՖԱԹՖ-ի հանձնարարականների իմպլեմենտացման անհրաժեշտությունը բխում է դեռևս 2005 թվականից Եվրոպայի խորհրդին ՀՀ անդամակցությունից:

50. Եվրոպայի խորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից 2015 թվականին հաստատվել է ՖԱԹՖ-ի հանձնարարականների ներդրման նպատակով 5-րդ փուլի գնահատման հաշվետվությունը, որով ամրագրվել է, որ Հայաստանը չի հետապնդում հանցավոր եկամուտների, հանցագործության գործիքների և համարժեք գույքի առգրավման և բռնագանձման քաղաքականություն:⁴⁷ Զեկույցով Հայաստանին առաջարկվում է ներպետական օրենսդրության իրավակիրառ քաղաքականության նպատակներում ներառել հանցավոր եկամուտների, հանցագործության գործիքների և համարժեք գույքի առգրավումը և բռնագանձումը, ինչպես նաև որդեգրել ենթադրյալ եկամուտների օրինական ծագման ապացուցման բեռի տեղափոխման և առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մեխանիզմը:⁴⁸

51. ՏՀԶԿ-ն 2018 թվականին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունների ուսումնասիրության արդյունքներով նույնպես առաջարկել է ներդնել չհիմնավորված հարստացման ինքնուրույն (ոչ քրեական) բռնագանձման մեխանիզմ, որը կենթադրի ապացուցման բեռի տեղափոխում և ապացուցողական չափանիշի իջեցում (հավանականությունների հավասարակշռում)՝ արդար դատաքննության երաշխիքների պահպանմամբ:⁴⁹ Ընդ որում, ակտիվների բռնագանձման ոլորտում

⁴⁷ Anti-money laundering and counter-terrorist financing measures, Armenia, Fifth Round Mutual Evaluation Report, December 2015, 7.

⁴⁸ Ibid, 42.

⁴⁹ OECD (2018), Confiscation of instrumentalities and proceeds of corruption crimes in Eastern Europe and Central Asia, Recommendation 9.1.

ՏՀԶԿ կողմից դրական գնահատականի է արժանացել Սլովենիայի ոլորտային օրենսդրությունը (2014թ. փոփոխություններով):⁵⁰

2) Ակտի նկարագրությունը

I. **Ինստիտուտի էությունը**

52. Ինչպես նշում է ՄԱԿ-ի՝ Թմրամոլության և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը, չնայած առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը ծագել է ընդհանուր իրավունքի երկրներում, այն վերջին տարիներին որդեգրվել է մայրցամաքային իրավական համակարգ ունեցող մի շարք երկրների կողմից:⁵¹

53. Ինչպես քրեական (ընդլայնված բռնագանձում), այնպես էլ քաղաքացիական բռնագանձման ռեժիմները տարբեր երկրներում գործում են գույքի հանցավոր ծագում ունենալու կանխավարկածի հիման վրա, որը ձևավորվում է օբյեկտիվ հանգամանքների առկայության պայմաններում: Այդպիսի օբյեկտիվ հանգամանքներ կարող են լինել անձի եկամուտների և գույքի անհամապատասխանությունը կամ անձի այլ հանցագործության համար դատապարտված լինելը, եթե առկա են հանգամանքներ, որոնք դատարանին հիմք են տալիս եզրակացնելու, որ դատապարտված անձի գույքը ձեռք է բերվել իր կատարած հանցագործությանը համանման ապօրինի գործողությունների կատարման արդյունքում:⁵²

54. Մշակված նախագիծը թույլ է տալիս ուսումնասիրել գույքը, դրա ձեռքբերումը և օգտագործումը և ներկայացնել բռնագանձման պահանջ, եթե գույքի ձեռքբերումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով: Նշված դեպքում գույքը օրենքի իմաստով համարվում է ապօրինի ծագում ունեցող և ենթակա է բռնագանձման:

⁵⁰ OECD/WGB (2014), Phase 3 report on Slovenia, 25, <http://www.oecd.org/daf/anti-bribery/SloveniaPhase3ReportEN.pdf>.

⁵¹ UNODC, State of implementation of the United Nations Convention against Corruption, Criminalization, law enforcement and international cooperation, 2017 (Second edition), Vienna, 58

⁵² Eurojust, Report on non-conviction-based confiscation (General Case 751/NMSK - 2012), 02 April 2013, 9-10; OECD (2018), Confiscation of instrumentalities and proceeds of corruption crimes in Eastern Europe and Central Asia, 67-78.

II. Ընտրված մոդելը

55. Հայաստանի Հանրապետությունում ներկայումս հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձումը իրականացվում է բացառապես մեղադրական դատավճռի կայացման հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 103.1. հոդվածի կիրառմամբ: Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ոչ մի մեխանիզմ ներդրված չէ:

56. Միևնույն ժամանակ, եվրոպական երկրներում անցկացված ուսումնասիրությունների հիման վրա հնարավոր է եղել առանձնացել առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վերաբերյալ ներպետական կարգավորումների չորս հիմնական համակարգ:⁵³

Մոդել 1. Բռնագանձում քրեական վարույթի շրջանակներում - Առկա է սկսված քրեական վարույթ, բայց մեղադրական դատավճռի ստացումն անհնար է (անձի մահ, անձեռնմխելիություն, ապացույցների անբավարարություն և այլն): Այս դեպքում ակտիվների բռնագանձումը հնարավոր է քրեական դատավարության շրջանակներում, եթե ապացուցվում է, որ առկա է կապ հանցագործության և դրանից ստացված ակտիվների միջև:

Մոդել 2. Ընդլայնված բռնագանձում - Առկա է մեղադրական դատավճիռ, որի հիման վրա կարող են բռնագանձվել դատապարտյալի ակտիվները ամբողջությամբ կամ դրանց մի մասը, այդ թվում՝ անհրաժեշտ չէ հաստատել այդ ակտիվների և հանցագործության միջև որևէ կապի առկայությունը:

Մոդել 3. Քաղաքացիական վերականգնում - Հավանականության ապացուցման շեմի հիման վրա, դատարանը հաստատում է, որ ավելի հավանական է, որ տվյալ ակտիվները հանդիսանում են հանցավոր արարքի հիման վրա ստացված: Այս դեպքում պետությունը ապացուցում է, որ հակաօրինական արարքի և ակտիվների մեջ առկա է անուղղակի կապ:

Մոդել 4. Չբացատրվող (անհիմն) հարստացման վարույթ - Այս քաղաքացիաիրավական վարույթի հիմքում ընկած են անձի օրինական աղբյուրներից ստացված եկամուտների և նրա փաստացի եկամուտների

⁵³ Ibid.

համեմատության հիման վրա բացահայտված էական անհամապատասխանությունները: Հանցավոր արարքի հետ անուղղակի կապի հաստատումը պարտադիր պայման չէ: Այս դեպքում ապացուցման բեռը տեղափոխվում է պատասխանողի վրա և ակտիվները բռնագանձվում են, եթե չի ապացուցվում դրանց ստացման օրինական աղբյուրը:

57. Որոշ երկրներում այս մոդելները գործում են միախառնված տեսքով: Միևնույն ժամանակ, եթե պետության համապատասխան օրենսդրությունը ձևավորվել է քաղաքացիական դատավարության շրջանակներում գույքի դեմ (in rem) բռնագանձման վարույթ հիմնելու ճանապարհով, ավելի քիչ հավանական է, որ օգտագործվող միջոցները կարող են իրենց բնույթով դիտվել որպես պատժիչ:

58. Առաջին երկու մոդելներում բռնագանձման հարցը քննվում է քրեական վարույթի շրջանակներում, մինչդեռ վերջին երկու մոդելներում հարցը քննվում է քաղաքացիական գործերով դատավորի կողմից՝ քաղաքացիական դատավարության նորմերի հիման վրա:

59. Քաղաքացիական գործերով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցի քննության երկու մոդելների տարբերությունը կայանում է նրանում, որ մի դեպքում վարույթը հիմնված է գույքի և հանցավոր արարքի միջև անուղղակի կապի հաստատման, իսկ մյուս դեպքում անձի օրինական աղբյուրներից ստացված եկամուտների և նրան պատկանող գույքի արժեքի էական անհամապատասխանության հաստատման վրա:

60. Օրենքի նախագիծը ներմուծում է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման չորրորդ մոդելը՝ չհիմնավորվող հարստացման բռնագանձումը, որը տարբեր դրսևորումներով առկա է Իտալիայում, Իռլանդիայում, Ավստրալիայում, Բուլղարիայում, Սլովենիայում, Միացյալ Թագավորությունում:

III. Օրենքի կիրառումը ժամանակի մեջ

61. Սթար ուղեցույցը խորհուրդ է տալիս պետություններին ընդունել այնպիսի օրենսդրություն, որը կիրառելի է նաև այն ակտիվների նկատմամբ, որոնք ձեռք են

բերվել մինչև համապատասխան օրենքի ընդունումը:⁵⁴ Մշակված նախագիծը կիրառելի է այդպիսի գույքի նկատմամբ՝ օրենքով նախատեսված սահմաններում, ինչը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի տրամաբանությունից:

62. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածը սպառիչ սահմանում է սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը: Ինչպես ընդհանուր, այնպես էլ մայրցամաքային իրավունքի երկրներին հայտնի է *nemo dat quod non habet* (ոչ ոք չի կարող փոխանցել այն, ինչ չունի) սկզբունքը, հետևաբար անձը, ով ձեռք է բերել գույք հակաօրինական ճանապարհով, չի կարող այն փոխանցել այլ անձի կամ ակնկալել այդպիսի սեփականության պաշտպանություն պետությունից:

63. Ընդ որում, անկախ նրանից, թե ինչքան ժամանակ է անցել գույքի ապօրինի ձեռքբերման պահից, անձը չի կարող դառնալ այդ գույքի օրինական սեփականատեր, եթե չեն բավարարվել ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված նախապայմանները, այդ թվում՝ տիրապետման բարեխղճությունը:⁵⁵ Հետևաբար, այն անձինք, ովքեր այդ գույքի նկատմամբ ունեն օրինական պահանջ, կարող են այն ներկայացնել իրավասու դատարան և միակ ժամկետը, որը կսահմանափակի նման պահանջի ներկայացումը հայցային վաղեմությունն է:

64. Այս սկզբունքը պահպանվել է օրենքի նախագծման շրջանակներում և հետևաբար չի վատթարացնում այն անձանց իրավական վիճակը, որոնք ապօրինի ճանապարհով ձեռք են բերել և պահպանում են կամ օտարել են որոշակի գույք: Այդպիսի գույքի նկատմամբ հայցային վաղեմության պահպանմամբ, մինչև օրենքի ընդունումը, այնպես էլ օրենքի ընդունումից հետո, կարող են պահանջներ ներկայացնել գույքի իրավատերերը կամ ՀՀ դատախազությունը՝ պետության շահերի պաշտպանության լիազորության իրականացման շրջանակներում:

65. Ընդ որում, ինչպես իրավատերերի, այնպես էլ դատախազության կողմից հայցի ներկայացման համար, ինչպես մինչև օրենքի ընդունումը, այնպես էլ դրանից հետո, նախապայման չի հանդիսանում անձի արարքի առնչությամբ մեղադրական

⁵⁴ Stolen Asset Recovery: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture (2009), Theodore S. Greenberg, Linda M. Samuel, Wingate Grant, and Larissa Gray, [Stolen Asset Recovery: A Good Practices Guide] Key Concept 8, 44.

⁵⁵ ՀՀ քաղաքացիական օրենսգրք, Հոդված 187.

դատավճռի առկայությունը: Հետևաբար, օրենքի ընդունումից հետո անձի կարգավիճակը մնում է անփոփոխ այն իրավունքների և պարտականությունների առնչությամբ, որոնք ծագել են մինչև օրենքի ընդունումը:

66. Անփոփոխելով՝ սույն օրենքի նախագիծը չի ստեղծում պատասխանատվության նոր տեսակ անձի կողմից ապօրինի ճանապարհով գույքի ձեռքբերման համար, այլ փոփոխում է գույքի բռնագանձման դատավարական գործիքները, այդ թվում՝ որոշակի հանգամանքների առկայության դեպքում առաջ է քաշում հերքելի կանխավարկածներ կամ ապացուցման բեռը տեղափոխում պատասխանողի վրա:

67. Օրենքի կիրառելիությունը դրա ընդունումից առաջ ձեռքբերված գույքի նկատմամբ ուղղակիորեն նախատեսված է նաև այլ երկրների ոլորտային օրենքներով, այդ թվում՝ օրինակ՝ Իռլանդիայի,⁵⁶ Բուլղարիայի⁵⁷ և Միացյալ Թագավորության⁵⁸ օրենսդրությամբ:

68. Քաղաքացիական բռնագանձումների վերաբերյալ իր դիրքորոշումը ՄԻԵԴ-ը առավել ամբողջական արտահայտել է Վրաստանի օրենսդրության գնահատման շրջանակներում՝ Գոգիտիձեն ընդդեմ Վրաստանի գործով:⁵⁹ Ի թիվս այլնի, անդրադառնալով օրենքին կամայականորեն հետադարձ ուժ տալու և օրենքի ընդունումից առաջ ձեռքբերված գույքի վրա տարածելու վերաբերյալ բողոքաբեր անձի բարձրացրած նկատառումներին՝ ՄԻԵԴ-ը արձանագրել է, որ 2004-ին ընդունված կարգավորումը առաջին օրենսդրական ակտը չէր, որը վերաբերում էր պաշտոնատար անձանց պատասխանատվությանը չհիմնավորված աղբյուրներից ունեցվածք կուտակելու համար,⁶⁰ իսկ 2004 թվականի օրենսդրությունը ընդամենը նորովի է կարգավորել առկա իրավական հակակոռուպցիոն ստանդարտների նյութական կողմը:⁶¹ Ավելին, դատարանը հաստատել է, որ Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածը չի կարող մեկնաբանվել այնպես, որ կանխի օրենսդրի կողմից շարունակվող փաստական իրավիճակների կամ

⁵⁶ Proceeds of Crime Act 1996 of Ireland, Section 1, proceeds of crime.

⁵⁷ Act on Counteracting Corruption and on Seizure Of Illegally Acquired Property 2018 of Bulgaria, Transitional and Final Provisions, § 9.

⁵⁸ Proceeds of Crime Act 2002 of UK, Section 362B (5).

⁵⁹ Michele Simonato, Confiscation and fundamental rights across criminal and non-criminal domains, 19 September 2017, Springer, p. 365, 366.

⁶⁰ Gogitidze and others v. Georgia, no. 36862/05, 12.5.2015, para 99.

⁶¹ Ibid.

իրավահարաբերությունների նորովի կարգավորումը հետադարձ կիրառություն ունեցող կարգավորումների միջոցով:⁶² ՄԻԵԴ-ը հաստատել է նաև, որ քաղաքացիական վարույթի արդյունքում գույքի բռնագանձումը ունի ոչ թե պատժիչ, այլ կանխարգելիչ և/կամ փոխհատուցող բնույթ և հետևաբար չի հանգեցնում Կոնվենցիայի 6 (2) հոդվածի կիրառելիության:⁶³

69. Ինչ վերաբերում է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական հարցին, ՀՀ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, անդրադառնալով այդ խնդրին, հաստատել է, որ համապատասխան սկզբունքը, ի թիվս այլնի, իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ ակնկալիքների հանդեպ:⁶⁴ ՀՀ Սահմանադրական դատարանի այս դիրքորոշման լույսի ներքո, սահմանադրական սկզբունքը չի կարող մեկնաբանվել այնպես, որ պաշտպանի իրավունք, որը չի ծագել անձի մոտ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը (սեփականության իրավունք):

70. Ավելին, գերմանական սահմանադրական իրավունքի տեսությունը, հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի որոշումները, տարբերում է օրենքների ռետրոակտիվ և ռետրոսպեկտիվ կիրառումը:⁶⁵ Ձևակերպումների տեսանկյունից օգտագործվում են իրական և ոչ իրական (pseudo) հետադարձ ուժի հասկացությունները:

Օրենքն այն ժամանակ ունի իրական հետադարձ ուժ, երբ արդեն իր ընդունումից առաջ ավարտված իրավահարաբերությունների վրա է տարածում հետագայում փոփոխված պայմանները: Սա սկզբունքորեն արգելված է: (...)

Ոչ իսկական հետադարձ ուժն առկա է այն դեպքերում, երբ օրենքն արդեն առաջացած, բայց դեռևս շարունակվող փաստակազմերի համար առաջին

⁶² Ibid, para 99.

⁶³ Ibid para 126. “(...) Court reiterates, in the light of its well-established case-law, that the forfeiture of property ordered as a result of civil proceedings in rem, without involving determination of a criminal charge, is not of a punitive but of a preventive and/or compensatory nature and thus cannot give rise to the application of the provision in question.”

⁶⁴ Տես օրինակ, ՀՀ Սահմանադրական դատարան, ՍԴՈ-1437, 14.12.2018թ.

⁶⁵ Prof. Dr. Johanna Hey, Retroactivity and Tax Legislation National Report Germany, EATLP 2010, 1.

անգամ միջամտող կամ միջամտությունը ծանրացնող իրավական հետևանքներ է նախատեսում, որոնք գործում են (միայն) ապագայի համար: Սա սկզբունքորեն թույլատրելի է նաև վստահության պաշտպանության տեսանկյունից, եթե չի խախտվում համաչափության սկզբունքը:⁶⁶

71. Ընդ որում, նույն տարանջատումը օգտագործվում է նաև ընդհանուր իրավունքի երկրներում:⁶⁷

72. Հիմք ընդունելով վերոնշյալը՝ օրենքը նախագծված է այնպես, որ այն կիրառելի է ապօրինի ծագում ունեցող գույքի տիրապետման՝ շարունակվող հարաբերությունների նկատմամբ և չի կապում նոր հետևանքներ օրենքի ընդունումից առաջ ծագած և ավարտված հարաբերությունների հետ:

73. Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով արդյունավետ պաշտպանության դատավարական երաշխիքի ապահովման անհրաժեշտությունը՝ օրենքի նախագիծը նախատեսել է որոշակի ժամկետային սահմանափակում այն գույքի առնչությամբ, որը կարող է բռնագանձվել՝ թույլ տալով պատասխանողին արդյունավետ կերպով մասնակցել վարույթին և ներկայացնել գործին վերաբերելի նյութեր:

IV. Գույքի՝ ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը

74. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը թույլ է տալիս դատական ակտը պատճառաբանել ենթադրություններով, եթե այդպիսի հնարավորությունը նախատեսված է օրենքով:⁶⁸ Օրենսգիրքը նաև սահմանում է, որ.

⁶⁶ Սահմանադրական Իրավունք II: Հիմնական Իրավունքներ. Մաս I. Հիմնական Իրավունքների Տեսություն / Մ. Զաքս. Թարգմանություն՝ Լեվոն Սարգսյան, Մասնագիտական Խմբագրություն և Թարգմանություն՝ Վարդան Պողոսյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2015., 280-281.

⁶⁷ Supreme Court of Canada in *Benner v. Canada (Secretary of State)*, [1997] 1 S.C.R. 358 adopted the definition of E. A. Driedger, in “Statutes: Retroactive Retrospective Reflections” (1978), 56 Can. Bar Rev. 264, at pp. 268–69:

A retroactive statute is one that operates as of a time prior to its enactment. A retrospective statute is one that operates for the future only. It is prospective, but it imposes new results in respect of a past event. A retroactive statute operates backwards. A retrospective statute operates forwards, but it looks backwards in that it attaches new consequences for the future to an event that took place before the statute was enacted. A retroactive statute changes the law from what it was; a retrospective statute changes the law from what it otherwise would be with respect to a prior event.

[Ե]թե գործին մասնակցող անձի վկայակոչած փաստի վերաբերյալ ապացույցն օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով գտնվում է միայն գործին մասնակցող այլ անձի մոտ, ապա վկայակոչված փաստը համարվում է հաստատված, քանի դեռ գործին մասնակցող համապատասխան անձը հակառակը չի ապացուցել:⁶⁹

75. Վերոնշյալի հիման վրա և հաշվի առնելով, որ գույքի ծագման վերաբերյալ ապացույցները, այն ծավալով, որով դրանք ձեռք բերելու հնարավորություն չունի իրավասու մարմինը, գտնվում են գույքը ձեռքբերած անձի մոտ՝ օրենքի նախագիծը նախատեսում է հայցի բավարարման հնարավորություն, եթե իրավասու մարմինը ապացուցում է, որ պատասխանողին պատկանող գույքը չի հիմնավորվում հայցվորին հասանելի օրինական եկամուտների վերաբերյալ տվյալներով: Համապատասխանաբար, պատասխանողը կարող է հերքել կանխավարկածը՝ ապացուցելով գույքի օրինական ձեռքբերումը՝ ներկայացնելով այն փաստաթղթերը, որոնք օրենքի ուժով հասանելի են միայն պատասխանողին: Ամեն դեպքում, ապօրինի ծագում ունեցող գույքը ենթակա է բռնագանձման միայն այն դեպքում, երբ գույքի և եկամուտների մինչև անհամապատասխանությունը էական է, այն է՝ գույքի շուկայական արժեքը գերազանցում է օրենքով նախատեսված սահմանաչափը:

76. Գույքի ապօրինի ծագում ունենալու հերքելի կանխավարկածի օգտագործումը խրախուսվում է Սթար ուղեցույցով⁷⁰ և արդեն օգտագործվում է այլ երկրների համարժեք օրենսդրական մեխանիզմներում:⁷¹

V. Ուսումնասիրության սկիզբը

77. Օրենքի նախագծով ուսումնասիրությունը սկսվում է քրեադատավարական որոշված ազդակների առկայության դեպքում, որից հետո ընթանում է քրեական ընթացակարգերից անկախ: Չնայած որոշ երկրներում բռնագանձման գործընթացները սկսվում են բացառապես ապօրինի գույքի առկայության մասին

⁶⁸ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, Հոդված 9 (3)՝ «Դատական ակտը չի կարող պատճառարանվել ենթադրություններով՝ բացառությամբ այնպիսի ենթադրությունների, որոնք թույլատրելի են օրենքում ամրագրված կանխավարկածներով»:

⁶⁹ Ibid, Հոդված 62 (4)

⁷⁰ Stolen Asset Recovery: A Good Practices Guide, 60-61.

⁷¹ Law on the seizure of assets of illegal origin (ZOPNI) 2011 of Slovenia, Article 5 (2), Article 27 (3); Act on Counteracting Corruption and on Seizure of Illegally Acquired Property 2018 of Bulgaria, Article 107.

կասկածի ուժով,⁷² օրենքի նախագծում հիմքերը (ազդակները) նախատեսվել են Բուլղարիայի⁷³ և Սլովենիայի⁷⁴ օրենքների հիման վրա, որոնք կապում են բռնագանձման վարույթի սկիզբը օրինակ մեղադրանքի առաջադրման կամ դրա օբյեկտիվ անհնարինության հաստատման հետ:

78. Իրարից անկախ ընթացող քաղաքացիական և քրեաիրավական ընթացակարգերի մոդելը խրախուսվում է Սթար ուղեցույցով՝ պայմանով, որ քաղաքացիական դատավարության կարգով հավաքված ապացույցները հնարավոր չլինի օգտագործել քրեական գործով:⁷⁵

79. Նմանօրինակ ընթացակարգ են որդեգրել մի շարք երկրներ,⁷⁶ ընդ որում, տարրնկալումներից խուսափելու համար որոշ օրենսդրություններ ուղղակիորեն սահմանել են, որ քրեական գործի ավարտը, այդ թվում՝ անձի արդարացմամբ, չի ազդում քաղաքացիական բռնագանձման գործի քննության վրա:⁷⁷ Նշվածը պայմանավորված է նրանով, որ երկու գործերով անձը կրում է տարբերակված ապացուցման պարտականություն և մի գործով անհաջող ավարտը չի կարող կանխորոշել ելքը մյուս գործով:⁷⁸ Այդ թվում՝ քրեական գործով անձի դատապարտումը չի ենթադրում, որ քաղաքացիական գործի շրջանակներում պետությունը կբավարարի իր վրա դրված սկզբունքայնորեն տարբեր ապացուցման պարտականությունը:

VI. Ուսումնասիրության հիմք հանդիսացող քրեական օրենսգրքի հոդվածների ցանկը

80. Ուսումնասիրության նախաձեռնման համար անհրաժեշտ իրավական ազդակ է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի որոշ հոդվածներով հարուցված քրեական

⁷² Proceeds of Crime Act 1996 of Ireland, Section 1A (1).

⁷³ Act on Counteracting Corruption and on Seizure of Illegally Acquired Property 2018 of Bulgaria, Article 108.

⁷⁴ Law on the seizure of assets of illegal origin (ZOPNI) 2011 of Slovenia, Article 10.

⁷⁵ Stolen Asset Recovery: A Good Practices Guide, 30.

⁷⁶ Օրինակ՝ Բուլղարիա, Սլովենիա, Միացյալ Թագավորություն, Ավստրալիա, Իռլանդիա և այլն:

⁷⁷ Proceeds of Crime Act 2002 of Australia, Section 51; Act on Counteracting Corruption and on Seizure of Illegally Acquired Property 2018 of Bulgaria, Article 108 (4), Article 153 (6) (1).

⁷⁸ E.g. UNODC, Digest of Asset Recovery Cases, New York, 2015, para 197 (Ferdinand and Imelda Marcos case).

հետապնդումը կամ որոշ դեպքերում հետապնդումն իրականացնելու անհնարինությունը:

81. Ընտրված հողվածների ցանկը ներառում է այն հանցագործությունները, որոնց հիմնական շարժառիթը հանցավոր աղբյուրներով գույքի ստացումն է կամ որոնց կատարման համար էական է ֆինանսավորումը կամ որոշակի գույքի օգտագործումը: Ընդ որում, այդ ապօրինի ծագում ունեցող գույքի հետ ուղղակի կամ անուղղակի կապը կարող է բխել հենց հանցակազմի էությունից կամ գոյություն ունենալ օբյեկտիվորեն, բայց կարևորված չլինել հանցակազմի շրջանակներում: Ցանկը ներառում է հիմնականում կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, ինչպես նաև թրաֆիքինգի, ահաբեկչության, թմրամիջոցների իրացմանն առնչվող հանցակազմեր:

82. Համապատասխանաբար, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը թույլ կտա կանխել ֆինանսական հանցագործությունները՝ վերացնելով դրանց կատարման շարժառիթը, իսկ որոշ դեպքերում վերացնելով այդպիսի հանցագործության կատարման հնարավորությունը:

VII. Իրավասու մարմնի լիազորությունները և տեղեկատվության հասանելիությունը

83. Իրավասու մարմնի լիազորությունների շրջանակը ուղղված է բռնագանձման պահանջով հայց հարուցելու համար հիմքերի առկայության բացահայտմանը և ապացույցների հավաքմանը:

84. Սթար ուղեցույցը նշում է, որ առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենսդրությունը պետք է պարունակի կարգավորումներ, որոնք թույլ են տալիս առանց կողմին ծանուցելու (ex parte) հավաքել ֆինանսական կամ այլ բնույթի ապացույցներ կամ կիրառել միջոցների սառեցում:⁷⁹ Բանկերի կողմից կոնֆիդենցիալ կերպով բանկային տեղեկատվության տրամադրումը բացատրվում է նրանով, որ կողմը, տեղեկանալով, որ իր գույքի առնչությամբ իրականացվում է

⁷⁹ Stolen Asset Recovery: A Good Practices Guide, 55.

քննություն, կարող է հեշտությամբ փոխանցել միջոցները այլ հաշվի և թաքցնել դրանք:⁸⁰

85. Լիազորությունների ծավալի որոշման համար հիմք են հանդիսացել հայցի նախապատրաստման և հարուցման համար դատախազությանը, ինչպես նաև փաստաբաններին հատկացված լիազորությունների շրջանակը: Ապացույցների հավաքման գործընթացում իրավասու մարմինը ձեռնարկում է պետական շահերի պաշտպանության ոլորտում դատախազությանը, ինչպես նաև դատական ներկայացուցչության իրականացման համար փաստաբաններին վերապահված համարժեք գործողություններ, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվության ստացում, մասնավոր անձանց հասանելի տվյալների ստացում և մասնագետների ներգրավում:⁸¹

86. Ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված այդ շրջանակն ընդլայնվել է: Մասնավորապես, նախագծով նախատեսվել է գաղտնիությամբ պաշտպանված ֆինանսական և այլ բնույթի ապացույցներ հավաքելու հնարավորություն՝ հաշվի առնելով, որ օրենքով նախատեսված հայցի ներկայացման համար նախապայման է հանդիսանում գույքի, դրա ձեռքբերման աղբյուրների և օգտագործման եղանակների վերհանումը:

87. Ուսումնասիրությունը (ֆինանսական հետաքննությունը) իրականացնող մարմնին օրենքով պահպանվող գաղտնիք կազմող տվյալներին հասանելիությունը բխում է առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման օրենքի նպատակներից և ամրագրված է առկա մոդելային օրենքներում:⁸² Ֆինանսական (այդ թվում՝ բանկային) տեղեկատվության հասանելիության վերաբերյալ կարգավորումներ են տեղ գտել տարբեր երկրների առանց մեղադրական

⁸⁰ Ibid.

⁸¹ «Փաստաբանության մասին» օրենք, Հոդված 18; «Դատախազության մասին» օրենք, Հոդված 29.

⁸² UNODC, Model Law on In Rem Forfeiture, Legal Assistance Programme for Latin America and the Caribbean LAPLAC, 2011, Article 9; Commonwealth Secretariat, Common Law Legal Systems Model Legislative Provisions on Money Laundering, Terrorism Financing, Preventive Measures and Proceeds of Crime, 2016, Part VII.

դատավճռի գույքի բռնագանձման օրենքներում, այդ թվում՝ Սլովենիայի,⁸³ Բուլղարիայի,⁸⁴ Ավստրալիայի,⁸⁵ Միացյալ Թագավորության,⁸⁶ և այլն:

VIII. Գույքի և ապացույցների պահպանումը

88. Օրենքը որդեգրել է քաղաքացիական դատավարության շրջանակներում հասանելի հայցի ապահովման, այդ թվում՝ նախնական ապահովման կարգավորումները՝ նախատեսելով որոշակի առանձնահատկություններ, որոնք հանգում են հետևյալին.

- Պետության, որպես կողմի առանձնահատկությունները, թույլ են տալիս հրաժարվել դեպոզիտային վճարումների և հակընդդեմ ապահովման ինստիտուտներից,
- Հաշվի առնելով մինչև հայցի հարուցումը անձանց՝ գործի նյութերին ծանոթանալու հնարավորության կառուցակարգի որդեգրումը՝ երկարաձգվել են նաև նախնական ապահովման միջոցների կիրառման պահից սկսած հայց հարուցելու համար նախատեսված ժամկետները, որոնք թույլ են տալիս անձանց ծանոթանալ գործի նյութերին, ներկայացնել առարկություններ/ապացույցներ, իսկ իրավասու մարմին վերոնշյալի հիման վրա որոշել հայց հարուցելու նպատակահարմարությունը և նախապատրաստել հայցադիմումը:

89. Օրենքը նախատեսում է նաև պետության կողմից գույքի կառավարման կանոններ՝ հաշվի առնելով, որ բացառիկ դեպքերում, կարող է անհրաժեշտություն առաջանալ որպես ապահովման միջոց գույքի տիրապետումը հանձնել պետությանը, այդ թվում՝ կանխիկ գումարի վատնումը կամ կառավարում պահանջող գույքի արժեզրկումը կանխելու համար:

90. Հաշվի առնելով նաև անձանց հայցի նախապատրաստման մասին տեղեկացնելու և հայցի հարուցման միջև ընկած երկար ժամկետները՝ օրենքի նախագիծը ներդրել է նաև ապացույցների նախնական ապահովման

⁸³ Law on the seizure of assets of illegal origin (ZOPNI) 2011 of Slovenia, Article 8.

⁸⁴ Act on Counteracting Corruption and on Seizure of Illegally Acquired Property 2018 of Bulgaria, Article 115

⁸⁵ Proceeds of Crime Act 2002 of Australia, Section 213.

⁸⁶ Proceeds of Crime Act 2002 of UK, Section 363.

հնարավորություն, որը թույլ կտա խուսափել ապացույցների ոչնչացումից հայցի նախապատրաստման փաստը բացահայտելուց հետո:

IX. Կիրառելի ընթացակարգային կանոնները

91. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջը, կարող է ներկայացվել և քննվել ՀՀ քաղաքացիական դատավարության կարգով: Համապատասխանաբար օրենքի նախագիծը կարգավորում է հայցի ներկայացման համար նյութերի և ապացույցների հավաքման ընթացքը՝ կանխատեսելի դարձնելով իրավասու պետական մարմնի գործողությունների հերթականությունը, ինչպես նաև նախատեսում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննության դատավարական առանձնահատկությունները:

92. Օրենքի նախագիծը նախատեսում է մինչև հայցի ներկայացումը բոլոր ապացույցներին ծանոթանալու հնարավորություն, ինչպես նաև մինչև հայցի ներկայացումը կամ դրանից հետո հաշտություն կնքելու հնարավորություն: Օրենքի նախագիծը նաև նախատեսում է վճռով բռնագանձման ենթակա գույքի որոշման կանոնները:

93. Ինչ վերաբերում է, քաղաքացիական գործի քննությանը, որն ընթանում է պատասխանողին առնչվող քրեական գործի քննությանը զուգահեռ, ապա վարույթների կասեցման առնչությամբ գործում են նույն կանոնները, ինչ զուգահեռ քննվող այլ գործերի դեպքում: Մասնավորապես,

«ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնելու գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ

դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարիությունը:⁸⁷»

94. Միևնույն ժամանակ, պատասխանողին առնչվող քրեական գործով կայացված վերջնական դատական ակտը քաղաքացիական գործի քննության համար ունի նշանակություն այնքանով, որքանով դա նախատեսված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ նախադատելիությանն առնչվող կանոններով: Մասնավորապես, քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված որոշակի արարքների և դրանք կատարած անձանց վերաբերյալ փաստերն այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն:⁸⁸ Միևնույն ժամանակ, քրեական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում կամ այն դեպքում, երբ բռնագանձման վերաբերյալ գործով քննարկվում են այդպիսի դատական ակտով չհաստատված արարքներ և փաստեր, դրանք ապացուցվում են քաղաքացիական դատավարության շրջանակներում ընդհանուր կարգով՝ օրենքով նախատեսված առանձնահատկությունների հաշվառմամբ:

X. Օտարված գույքը և բարեխիղճ երրորդ անձիք

95. Հաճախ ապօրինի ծագում ունեցող գույքը ձեռք է բերվում ընտանիքի անդամների կամ այլ ծանոթների միջոցով կամ ձեռքբերումից հետո փոխանցվում է այլ անձանց անհատույց կամ նոմինալ գնի վճարման դիմաց:⁸⁹ Նման մեթոդների օգտագործմամբ ապօրինի ծագում ունեցող գույքի պահպանումը կանխելու համար օրենքը նախատեսում է, բացառապես բարեխիղճ ձեռք բերողների պաշտպանություն:

⁸⁷ Թիվ ԵԷԴ/1951/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճարել դատարանի 12 դեկտեմբերի 2016 թվականի որոշումը.

⁸⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգրք, Հոդված 61 (3).

⁸⁹ Stolen Asset Recovery: A Good Practices Guide, 73.

96. Օրենքի հիման վրա իրականացվող ուսումնասիրության ծավալը ներառում է փոխկապակցված անձանց անհատույց կամ շուկայականից էականորեն տարբերվող գնով փոխանցված գույքը: Այդպիսի օտարման գործարքը չի կարող որևէ իրավական հետևանքներ ունենալ պետության նկատմամբ, քանի որ անձը, ով փոխանցել է գույքը, չի հանդիսացել դրա սեփականատերը, հետևաբար իրավունք չի ունեցել այն փոխանցել: Մյուս կողմից՝ այդպիսի գույքի նկատմամբ առկա է պետության իրավունքը, որը ծագել է գույքի ապօրինի ճանապարհով ձեռքբերելու պահին:

97. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը թույլ է տալիս իրավատիրոջը հետ պահանջել այն գույքը, որն օտարվել է անհատույց, այդպիսի իրավունք չունեցող անձի կողմից:⁹⁰ Նշված կարգավորման հիման վրա, օրենքի նախագիծը ուսումնասիրվող գույքի ծավալում է ներառում նաև այն գույքը, որն անձն օտարել է անհատույց կամ շուկայականից էականորեն տարբերվող գնով:

98. Օրենքի նախագծի հիման վրա իրականացվող ուսումնասիրության ծավալը ներառում է նաև այն գույքը, որը պատկանում է այլ անձի, բայց որի իրական շահառուն է հանդիսանում անձը, ում գույքի առնչությամբ նախաձեռվնել է ուսումնասիրությունը: Այս կարգավորումն ուղղված է կանխելու այն իրավիճակները, երբ գույքի իրավական սեփականատիրոջը փոխելով՝ գույքի փաստացի սեփականատերը փորձում է թաքցնել իր գույքի իրական ծավալները:

99. Գույքի ուսումնասիրության ընդլայնված ծավալները բխում են այս մեխանիզմի էությունից և ամրագրված են նաև այլ պետությունների օրենսդրական ակտերում:

100. Միացյալ Թագավորության հանցավոր եկամուտների օրենսդրությանը չհիմնավորված հարստացման մեխանիզմի իմաստով, ի թիվս այլնի, անձին պատկանող գույքի մեջ ներառված է համարում այն գույքը, որն անձը վերահսկում է (effective control):⁹¹ Նմանօրինակ կարգավորում է նախատեսում նաև Ավստրալիայի օրենսդրությունը:⁹²

⁹⁰ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, Հոդված 275 (3)՝ «Եթե գույքն անհատույց է ձեռք բերվել այն օտարելու իրավունք չունեցող անձից, ապա սեփականատերը բոլոր դեպքերում իրավունք ունի հետ պահանջել այդ գույքը:»:

⁹¹ Proceeds of Crime Act 2002 of UK, Section 362H.

⁹² Proceeds of Crime Act 2002 of Australia, Section 179S.

101. Բուլղարիայի օրենսդրությունը նախատեսում է, որ ապօրինի ծագում ունեցող գույքի օտարման գործարքներն անվավեր են պետության հետ հարաբերություններում և ենթակա են վերացման, եթե դրանք անհատույց են կամ կատարվել են գույքի ապօրինի ծագման մասին իմանալով, այդպիսի ծագումը կամ գույքի նկատմամբ այլ անձի իրական իրավունքները թաքցնելու նպատակով:⁹³

102. Սլովենիայի օրենսդրությունը նախատեսում է, որ գույքի և եկամուտների միջև էական անհամապատասխանության առկայությունը որոշելու համար հաշվի է առնվում, ի թիվս այլնի, այն գույքը, որը պատկանում է անձին կամ որը փոխանցել է իր հետ փոխկապակցված անձանց կամ միախառնվել իրենց գույքի հետ:⁹⁴

103. Ըստ այդմ, օրենքի նախագիծը նախատեսում է, որ պաշտպանվում են միայն այն ձեռք բերողները, որոնք չգիտեին և չէին կարող իմանալ գույքի ապօրինի ծագման մասին և իրենց օրինական եկամուտների օգտագործմամբ փաստացի իրականացրել է գույքի դիմաց դրա իրական արժեքին համապատասխանող վճարում:

104. Օրենքը նաև պաշտպանում է, այն ձեռք բերողներին, որոնք չգիտեին և չէին կարող իմանալ գույքի ապօրինի ծագման մասին և գույքը իրենց փոխանցվել է որպես կյանքին ու առողջությանը պատճառված վնասի հատուցում, ալիմենտ կամ տրամադրել է բարեգործական նպատակներով:

105. Ամեն դեպքում, եթե անձին պատկանող գույքի ծավալներում ներառվում է գույք, որը իրավական տեսանկյունից պատկանում է այլ անձի, իրավասու մարմինը կրում է փոխկապակցվածությամբ կատարված գործարքի կամ իրական շահառու հանդիսանալու հանգամանքի ապացուցման պարտականությունը:

106. Օրենքը պաշտպանում է նաև երրորդ անձանց գույքային այլ իրավունքները, այդ թվում՝ գրավի իրավունքը, եթե իրավատերը գործել է բարեխղճորեն:

⁹³ Act on Counteracting Corruption and on Seizure of Illegally Acquired Property 2018 of Bulgaria, Article 143.

⁹⁴ Law on the seizure of assets of illegal origin (ZOPNI) 2011 of Slovenia, Article 5 (3),

XI. Իրավունքների պաշտպանության երաշխիքներ

107. Անձանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մեխանիզմի ներդրման հետ միասին անձանց հիմնարար իրավունքների պաշտպանության համար սահմանվել են մի շարք երաշխիքներ, այդ թվում՝

- ուսումնասիրությունների իրականացման սահմանափակ ժամկետներ,
- ուսումնասիրության առկայության և հավաքված նյութերի գաղտնիություն,
- պարտադիր հրապարակային ծանուցումների իրականացում գույքի առնչությամբ շահագրգռվածություն ունեցող բոլոր անձանց համար գործին մասնակցելու հնարավորություն ստեղծելու նպատակով,
- մինչև հայցի ներկայացումը նյութերին ծանոթանալու, հայտարարագիր և դիրքորոշում ներկայացնելու հնարավորություն,
- կայացվող դատական ակտերը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր կարգով բողոքարկելու հնարավորություն,
- պատասխանողի՝ անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորություն,
- արգելադրված գույքի մի մասը դատարանի որոշմամբ արգելանքից ազատելու հնարավորություն գործին մասնակցող անձի փաստաբանի վարձատրությունը, ապրուստի ծախսերը հոգալու նպատակով:

XII. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

108. Օրենքի նախագիծը մշակվել է «Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեպքում մեղադրյալի կողմից գույքի օրինականության ապացուցման վերաբերյալ» և «Առանց մեղադրական դատավճռի հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման վերաբերյալ» հայեցակարգերով նախատեսված ինստիտուտների ներդրման համար ձևավորված աշխատանքային խմբի կողմից:

109. Օրենքի նախագիծը ներկայացվել է նաև փորձագետների ուսումնասիրմանը և աշխատանքային խումբը ստացել է կարծիքներ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի, ԵԽ, ԱՄՆ դեսպանատան, ՍԹԱՐ նախաձեռնության կողմից ներգրավված փորձագետներից:

Նախագծի վերաբերյալ արված առաջարկները քննարկվել են փորձագետների հետ և իրենց արտացոլումը գտել օրենքի նախագծում:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի և հարակից օրենքների ընդունման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում ենթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՒՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ»,
«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆՈՏԱՐԻԱՏԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԴԱՏԱԽԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱ-
ՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ
ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-
ՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄ ԿԱՄ ԾԱԽՍԵՐԻ
ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին», «Բանկային գաղտնիքի
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,
«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Նոտարիատի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման կապակցությամբ կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացմանը, որոնք ներկա պահին գնահատել հնարավոր չէ: